

# Այունյաց երկիր

ՀԱՐԱՐ  
13 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2014Թ. №33 (341)  
www.syuniacyerkir.am

...Երգե երկրի՛ց է  
անում եւ ո՛չ թե  
ձայներից կամ  
բառերից:  
ԵՐԵՎԱՆ 2014



Սսրեփանոս Գեղորգյանը եւ Վազգեն Սահակյանը

## Բարեգործություն Մեծ Բրիտանիայից

### Ստողադատություն

Կապանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի պարիս փակցված ցուցանակը «հայրնում» է՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամ, Կապանի բժշկական կենտրոնի Սարգիս, Հելեն, Կարապետ եւ Վեհանուշ Նազարեանների անվան մանկական բաժանմունքի մասնաճյուղի հիմնադրումը ֆինանսավորել է Մեծ Բրիտանիայի փոխարկական մարմինը Կարապետ Նազարեանի կրակով (2011): Վեց տասնամյակից ավելի վաղեմություն ունեցող մասնաճյուղում փոխարկվել է ջեռուցման նոր համակարգ, ամբողջովին փոխվել են ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրականության համակարգերը, միջհարկային ծածկերը փոխարկվել են բեթոնյա ծածկով, իսկ փանիքն ամբողջովին փոխվել է: Վերակառուցում-հիմնադրումից զատի՝ «Հայաստան» համահայկական ծրագրի շրջանակում բաժանմունքը նաեւ կահավորվել է, համալրվել նոր բուժարքավորումներով, սրբացել շտապօգնության նոր մեքենա: Մոտ երեք տարի առաջ բուժ-հիմնարկը վերաբացեց դռները:

Այս ամենով հանդերձ՝ բուժփնտրակը որոշ կահավորման կարիք էր գգում, ինչն իրականացրեց բրիտանացի բարերար Կարո Պերպերյանը՝ հատկացնելով ութ միլիոն դրամ արժողությամբ գույք՝ սառնարաններ, հեռուստացույցներ, պահարաններ, մահճակալներ: Դեկտեմբերի 3-ին անհրաժեշտ այդ գույքն իր տեղը գտավ մասնաճյուղում: Այսպիսով նա ի կատար ածեց իր հարազատների պատգամը՝ օգնություն ցուցաբերել մայր հայրենիքին: Իսկ արդյունքում թեթևացավ փոքրիկ հիվանդներին խնամող մայրերի հոգսը:

Մանկական բաժանմունքի երկրորդ հարկում մի ցուցանակ եւս ավելացավ. «Բաժանմունքը կահավորված է Պերպերյան ընտանիքի կողմից (Լոնդոն) ի հիշատակ Լուսավառ եւ Կարապետ Պերպերյանների»:

Փորձում ենք տեղեկություններ իմանալ Պերպերյանների գերդաստանի մասին. Կարոյի տատն էր գրում մի քանի տարի: Տատն ինը տարեկան էր, երբ սկսվեց ջարդը, ինչպես ինքն է ասում: Պապն ունեւոր ընտանիքից էր, թուրքերն ասացին, որ ընտանիքին ձեռք չէն տա, եթե մահնեղականություն ընդունեն: Պատասխանեց՝ քրիստոնյա ծնվել ենք, քրիստոնյա էլ կմեռնենք: Մի անգամ էլ թուրքի ձեռքը հասավ պապին, երբ 1970-ականների կեսին թուրքերը բռնազավթեցին Կարոյի կեսը: Իսկը հայի ճակատագիր...

Բարեգործության հասցեն Կարոյին հուշել է «Ապավեն համայնքներին» կազմակերպության գործադիր տնօրեն, ընտանեկան բժիշկ Սուսաննա Օճանյանը, ով բարերարին ուղեկցում էր կապանյան այցի ընթացքում: «Իմ ընկերները՝ Անգլիայից, խորհուրդ տվեցին համագործակցել Կարո Պերպերյանի հետ: Հատկապես տեղյակ են տարածաշրջանային եւ գյուղական առողջապահության հիմնախնդիրներից: Կապանում շատ են եղել, դասախոսություններով հանդես եկել բժիշկների, բուժօլորների համար: Մտածեցի, որ նպատակահարմար կլինի բարեգործությունը մայրաքաղաքից դուրս իրականացնել: Տպավորությունս այն է, որ շատ դեպքերում մարդերը հանիրավի դուրս են մնում տեսադաշտից: Եվ սմբատ Օրբելյանի հետ խորհրդակցելով՝ որոշեցինք օժանդակությունը ներդնել վերակառուցված մանկական բաժանմունքում՝ կահավորումն ավարտին հասցնելով», - պատմում է Սուսաննան:

- Հայ առաքելական եկեղեցու Անգլիայի ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 2

## Հաղթահարելով ինը տասնամյակի շեմը...

### Գնահատում

Քաջարանի հանդիսությունների սրահում դեկտեմբերի 2-ին մեծարման երեկո էր: Հավաքվել էին Քաջարանի քաղաքապետարանի եւ «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ղեկավար անձինք, փարբեր փարիքի եւ զբաղմունքի մարդիկ՝ արժանին մատուցելու համայնքի երկու ավագագույն մարդկանց՝ Սսրեփանոս Գեղորգյանին եւ Վազգեն Սահակյանին:

Օրը պատահական չէր ընտրված. լրանում էր Սսրեփանոս Գեղորգյանի ծննդյան 90-ամյակը, իսկ Վազգեն Սահակյանի հորեւրանական տարեդարձը կլրանա օրերս: Վաս-

տակաշատ մանկավարժ Վանյա Գալստյանը, չնայած առաջացած տարիքին, ստանձնել էր հանդիսությունը վարելու պարտականությունը: Հավուր պատշաճի ներկայացրեց պատերազմի եւ աշխատանքի վետերանների անցած ուղին, որը առավելապես կապված է եղել Քաջարանի կոմբինատի հետ:

Քաջարան համայնքի պատվավոր քաղաքացի Սսրեփանոս Գեղորգյանը աշխատանքային գործունեությունն սկսել է այն ժամանակ, երբ երկրաբանները Գանձասարի վրա հայտնաբերել էին պղնձի եւ մոլիբդենի խոշոր հանքավայր: Աշխատեց հանքաքարի ուսումնասիրմամբ զբաղվող լաբորատորիայում: Ասել էին, որ խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկություն պիտի կառուցվեր, բայց վերա-

հաս պատերազմը խառնեց բոլոր խաղաքարտերը: Սսրեփանոսն իր սերնդակիցների հետ 1941-ի դեկտեմբերին մեկնեց ռազմաճակատ. երկրորդ աշխարհամարտի քառուղիներով հասավ մինչեւ Գերմանիա եւ մեծ հաղթանակի բերկրանքը վայելեց Բեռլինում: Պատերազմից հետո մասնակցել է կառուցվող կոմբինատի փորձնական ֆաբրիկայի մոնտաժման աշխատանքներին: Կոմբինատի շահագործումից հետո գործուղվել է Սվերդլովսկ, վերապատրաստվել որպես հանքահարստացնող: Նաեւ հերթափոխի պետ է եղել, 1966-1972թթ. ղեկավարել է ձեռնարկության արհմիությունը, որից հետո կրկին աշխատել է ֆաբրիկայում եւ 1992թ. անցել վաստակած հանգստի: Այժմ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 3

## Աշտրավանում ոչնչանում են մեղուները, իսկ մասնագետները գլուխ չեն հանում

### Սարգի գյուղեր

Աշտրավան համայնքն աշխարհագրական բարենպաստ դիրք ունի Սիսիանի փարածաշրջանի շար գյուղերի հետ համեմատ: Սիսիանից վեց կիլոմետր, իսկ մի քիչ ավելի հեռու է Մեղրի-Երեւան միջպետական ճանապարհից: Հաշվված թուղենների ընթացքում կարելի է հասնել Սիսիան, մանավանդ վերջերս այդպեղ տանող ճանապարհը փոքրիշատե բարեկարգվել է: Գյուղը կառուցված է հարթության վրա, ուղղաձիգ փողոցներով: Բայց լեռնային

համայնքների նման ունի հոգսեր ու խնդիրներ: Համայնքը 2006 թվականից ղեկավարում է Արմեն Բեգլարյանը:

### Պարմական ակնարկ

Բնակավայրի մասկին անվանումներն են Աղբենո, Թագաքենո, Կիրակոսիկ: Այս վերջին անունով հիշատակվում է 13-րդ դարից: Ըստ հին հարկացուցակի՝ Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր հարկ: Աշտրավանը հիմնադրվել է Պարսկաստանի խոյ գավառից գաղթած ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 5



ԱՐՄԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆ  
Աշտրավանի գյուղապետ

ԼՍՊԱՍՎՈՐԵ Ա. ԳՈՐԾԹՅՈՒՆՅԱՆ



«Կապանի ԲԿ» ՓԲԸ տնօրեն Սմբատ Օրբելյանը, Կարո Պերպերյանը և Սուսաննա Օնանյանը

## Բարեգործությունն Մեծ Բրիտանիայից

### Ստորագրումները

ՍԿԻՉԲԸ՝ ԵՏ 1  
Թե՛ղ մանկական բաժանմունքի օգնություն էր ցույց տվել, բայց գու՛մարը բավականացրեց շտապօգնության մեքենա ձեռք բերել, իսկ մասնաշենքի ներքին կահավորման որոշ խնդիրներ բաց էին մնացել, քերես, այդ բացը կլրացվի այս բարեգործությամբ: Մեր ուզածն այն է, որ յուրաքանչյուր հիվանդասենյակ հեռուստացույց ու սառնարան ունենա: Հետաքրքիր է, որ նախորդ անգամ էս բարեգործությամբ հանդես էին եկել բրիտանացիները, փոխանցում է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Սմբատ Օրբելյանը:  
Լարիսա Ջհանգիրյանը, ով մանկական բաժանմունքի վարիչն է 1992 թվականից, տեղեկացնում է, որ մանկական բաժանմունքի մասնաշենքը կառուցվել է 1959 թվականին, մինչև 2010 թվական մի անգամ մասնակի նորոգում է կատարվել, ինչը բավա-

րար չէր, որ մինչ հիմնանորոգումն իրենք վատթարագույն պայմաններում էին աշխատում: Այժմ էլ աշխատապայմաններն են բարելավվել, եւ բուժփիննարկը հագեցված է ամերիկացի բուժարքավորումներով ու պարագաներով:  
Սյունիքի մարզպետի անունից Կարո Պերպերյանին երախտագիտություն հայտնեց մարզպետի խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանը:  
Դեկտեմբերի 4-ին Կարո Պերպերյանը հյուրընկալվեց Կապանի քաղաքապետարանում, պատմեց, թե ինչպես հղացավ Կապանի բուժփիննարկին օգնություն ցուցաբերելու գաղափարը: Նա հայտնեց, որ բարեգործությունը շարունակական դարձնելու նպատակով մտադիր է ծրագրի մեջ ընդգրկել Մեծ Բրիտանիայի հայ համայնքի մյուս անդամներին: Նաև հողավածով է հանդես եկել իր քաղաքում հրատարակվող ամսագրում՝ կապանյան այս բարեգործության

## Քննարկվեցին փարեվերջին առնչվող հարցեր

### Սարգսյանի հարցեր

Սարգսյանի հարցերի 6-ին կայացած նիստում քննարկվեցին մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքման, մարզի անտառային տարածքների պահպանության ոլորտում բնապահպանական մարմինների հետ համագործակցության, մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների եւ նյութատեխնիկական բազայի բարելավման եւ ոլորտում առկա այլ խնդիրների, մարզի ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձեռնարկի պահպանման աշխատանքների մասին հարցեր:  
Սարգսյանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Հարություն Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքները սեփական եկամուտները հավաքել են նախատեսվածի 93 տոկոսի չափով կամ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ աճը կազմում է 13.7 տոկոս: Մարզի միայն տասը համայնք է 100 տոկոսով հավաքել սեփական եկամուտները: Բանախոսը նաև այլ թվեր հրապարակեց. համայնքներից հինգը եկամուտները հավաքել է 30, 41 համայնք՝ մինչև 75 տոկոս չափով, իսկ մինչև տարեվերջ հաշվված օրեր են մնում...  
Սարգսյանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանն իր ելույթում, մասնավորապես, մանրամասնեց ձմռան տարեշրջանում բնակչությանը հատկացվող վառելիքայտի քանակության եւ գնի մասին տվյալներ: Այսպես, մարզում գործող անտառտնտեսությունները հատկացրել են 62 հատատեղ, որոնց ֆոնդը կազմում է վեց հազար խորանարդ մետր, ընդ որում՝ մեկ խորանարդ մետրի գինը 9720 դրամ է՝ ինքնապատրաստման եղանակով: Այս տարվա ընթացքում գյուղական

համայնքների բնակչությանը տրվել է 3160 խմ անվճար թափուկ, համապատասխանաբար հատկացվել է 400 տոննա:  
«Սառած ձեռքերով ու ոտքերով երեխան նորմալ կրթություն ստանալ չի կարող», փոխարքայի պաշտոնակատար Բազմիկ Ավետիսյանը իր խոսքում եւս ձեռնային թեմա շոշափեց, այն է՝ մարզի ավտոմոբիլային ճանապարհների ձեռնարկի պահպանումն ու սպասարկումը: Ամառային եւ ձմռային պահպանման աշխատանքներն իրականացնելու համար 2014թ. բյուջեով հատկացվել է 105, 2 մլն դրամ: Դրանով հնարավոր է իրականացնել միայն 109,1 կմ երկաթուղային ճանապարհի ձեռնարկի պահպանման աշխատանք, որ կազմում է ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքների 45.5 տոկոսը...  
Ամփոփելով միտի արդյունքները՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն արատավոր համարեց համայնքի ղեկավարների գործելակերպը, երբ սեփական եկամուտների հավաքումը ձգում են մինչև տարվա վերջը: Նա խնդիր դրեց մինչև դեկտեմբերի 12-ը պահովել սեփական եկամուտների հավաքումը: Մարզի ղեկավարը համայնքապետներին հորդորեց նաև համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ իր համաներդրման խնդիր չկա: «Այսօր միջազգային շատ կազմակերպություններ պատրաստ են մարզի համայնքներում ծրագրեր իրականացնել եւ համաներդրման պատճառով դրանք չեն իրականանում: Մենք համաներդրման խնդիր չունենք»:  
ՀԱՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

## Հաշմանդամ ազապամարտիկները՝ ուշադրության կենտրոնում

### Վանդիմուն

Դեկտեմբերի 3-ին հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Կապանի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանն այցելեց Արցախյան ազապամարտի 1-ին կարգի հաշմանդամներ Արմեն Համբարձումյանին եւ Մանվել Վարդանյանին:  
Նմանատիպ այցելություններ կատարեցին նաև առաջին բանակային կորպուսի հրամանատարի տեղակալը, Ս գործառնափ, տանկային գումարտակի եւ վերանորոգման գումարտակի հրամանատարական եւ սպայական կազմերը: Այցելության նպատակն էր ծանոթանալ հաշմանդամ ազապամարտիկների խնդիրներին եւ հնարավորության սահմաններում փորձել աջակցել նրանց: Նշենք, որ Կապանի տարածաշրջանում կա

առաջին կարգի 8, երկրորդ կարգի 135, երրորդ կարգի 83 հաշմանդամ ազապամարտիկ:  
Արմեն Համբարձումյանի առողջական վիճակն այնքան էլ տպավորիչ չէր: 22 տարեկանում ճակատենի մերձակայքում վիրավորվելով՝ նա այսքան տարի գամվել է անկողնուն եւ ապրում է եղբոր ընտանիքի հետ: Նրան շտապ անհրաժեշտ է վիրահատություն, որ արժե 2 միլիոն դրամ: «Ձինվորական հոսպիտալում չեն ընդունում՝ պատճառաբանելով, որ տեղ չունեն, այնինչ այնտեղ բուժում ստացողների կեսից ավելին ոչ զինվորականներ են: Տարբերատյաններ են դիմել, բայց պատասխան չեն ստացել: Պետք է նշեն, որ չեն կարողանում իմ խոսքը հասցնել պաշտպանության նախարարին, վերջերս էլ ականատես եղա մի հրապարակման, որտեղ նշվում էր, որ իբր ես շնորհիվ նախարարի միջամտության լիովին ապաքինվել եմ», օրնում է ազապամարտիկ Արմենը:



Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանը 1-ին կարգի հաշմանդամ Մանվել Վարդանյանի հետ

Արմենի եղբայրը նշեց, որ ամիսներ շարունակ երեւանի հիվանդանոցներում շրջել են բուժման համար, բայց. «Ես նույնպես ընտանիք են պահում, չեն կարող ամիսներով հիվանդանոցում մնալ, եթե պետությունը զոնե խնամակալի համար վարձատրի ինձ, կամ

թեկուզ պետությունը խնամակալ տրամադրի, կկարողանանք հիվանդանոցում երկար մնալ, բուժել ոտքի վերջը, այնուհետեւ վիրահատություն կատարել»: Բացի դրանից՝ Հայաստանի շատ հիվանդանոցներ նույնիսկ թեքահարթակներ չունեն, իսկ հիվանդանոցային պայմաններ

ը նման հիվանդների համար լուրջ խնդիրներ են ստեղծում:  
Կապանի զինկոմը, լսելով Արմենի խնդիրների մասին, խոստացավ համապատասխան գործուն պատրաստել նրա վիճակի մասին եւ ուղարկել վերադաս հրամանատարությանը: Նա նշեց նաև, որ կարելի է այլընտրանքային աշխատանքային զինծառայողներին, ովքեր կան հոգեբուժաբանում եւ աշխատում, կան կոմունալ տնտեսությունում, պատերազմի առաջին կարգի հաշմանդամների խնամակալությունը հանձնել:  
Տավալի է, որ Արմենը կորցրել է հույսն ու հավատը: Վերջում նա ասաց, որ եթե պատերազմ լինի, էլ ով կզմա, երբ տեսնում է նման վերաբերմունք, բայց մենք հավատացած ենք, որ հենց իր նման տղաները կրկին կմեկնեն մարտի դաշտ:  
Մանվել Վարդանյանը, ով գլխից վիրավորվելով, հավիտյան զրկվել է արելի լույսը տեսնելու հնարավորությունից, համեստաբար լռում է: Նրան մտահոգողը միայն այն է, որ կինը՝ տիկին Արեւիկը, 23 տարի է աշխատանքից դուրս է եկել իրեն խնամելու համար եւ հետագայում, երբ կենսաբոլորակ ստանալու տարիքը լրանա, նա աշխատանքային ստաժ չունենալու պատճառով ցածր կենսաթոշակ կստանա: Եթե կարողանային այդ անցած



«Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ վարչական փնտրեն Վահե Հակոբյանը շնորհավորում է հոբելյարներին

## Հաղթահարելով ինը փասնամյակի շեմը...

### Վճահասանք

Կենսաթոշակի անցնելուց հետո գյուղատնտեսական գործերով է զբաղվում, օգնում հարեւանին, բարեկամին, ընկերոջը: Արժանիորեն նա էլ է կրում «Քաջարանի պատվավոր քաղաքացի» կոչումը:

«Այս երկու անձանց մեջ ընդհանուրն այն է, որ մեր երկրի եւ ժողովրդի համար դժվարին ժամանակներում են ապրել, չեն ընկրկել, բավարարվել են քչով եւ օգտակար եղել կողքիններին, եւ այժմ իրավացիորեն հարգանքի են արժանանում», - ասաց հանդիսավարը:

Յոթեկարներին զննատանքի խոսքեր հղեց Քաջարանի քաղաքացի Վարդան Գեւորգյանը՝ քաղաքացիության անունից նվերներ հանձնելով նրանց: Համայնքի երկու տարեց անդամին, ինչպես նաեւ 90-

սահմանագծին մոտեցած մարդկանց, որոնց գործունեությունն այս կամ այն կերպ առնչվել է կոմբինատի հետ, դրամական պարգևներ եւ նվերներ հանձնեց «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Վահե Հակոբյանը: Ստեփանոս Գեւորգյանին եւ Վազգեն Սարգսյանին բարեմտաբաններ հղեց կոմբինատի արհեստի նախագահ Դավիթ Գեւորգյանը, ջերմ խոսքեր ասաց եւ հուշանվերներ հանձնեց երկուսն էլ կամավորների միության քաջարանյան մասնաճյուղի ղեկավար Հովհաննես Մատինյանը:

Ուրախ տրամադրությամբ էին համակված բոլորը, իսկ հոբելյարները՝ շոյված եւ հարգված...

ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՎԱՏԱՆՎՈՒՄ է երեք սեռյակաճուց բնակարան, Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

## Փոքր դպրոցի խնդիրները՝ օլիմպիադաներից մինչեւ կարգի ընտրությունն ու ֆինանսավորում

### Նամակարթություն

Վերին խոփանակի միջնակարգ դպրոցը, որ ժամանակին (խորհրդային փարիներին) 100-ից ավելի աշակերտ ուներ, այս ուսումնական տարին դիմավորել է 25 աշակերտով, առաջին անգամ դպրոց ուր է դրել մեկ առաջին դասարանից:



ԽԱԶԻԿ ԲԱԳՎԱՅԱՆ Վերին խոփանակի դպրոցի փնտրեն

Կրթօջախ մտնելիս՝ մուտքի աջ ու ձախ պատերին անմիջապես տեսանելի են գյուղի երկու մեծերի՝ Մովսես Տաթևացի կաթողիկոսի եւ Պողոս Տեր-Դավթյանի (դպրոցն արդեն կրում է նրա անունը) նկարներն ու տեղեկություններ նրանց մասին, որ պատկերել է դպրոցի նախկին տնօրեն Ալմարա Անտոնյանը:

Դպրոցն արդեն 10 տարի ղեկավարում է մասնագիտությամբ ֆիզիկոս Խաչիկ Բաղդասյանը: Ծնվել է հենց Վերին խոտանանում, Լեւոնգրադում ավարտել տեխնոլոգիական ինստիտուտն ու վերադարձել հայրենի գյուղ, մինչ տնօրեն նշանակվելը ինը տարի աշխատել ուսուցիչ, տարբեր առարկաներ դասավանդել, կնոջ ու երեք զավակի հետ դարձել համայնքի կյանքի անբաժանելի մասը:

Դպրոցական շենքը (180 աշակերտի համար) կառուցվել է 1983-ին, մինչ այդ եղած դպրոցական նախկին շենքը կառուցված է եղել 1930-ականներին:

Այս ուսումնական տարում Վ.խոտանակի դպրոցում կոմպլեկտավորվել է ինը դասարան, բայց քանի որ ոչ լիարժեք դասարաններ են, միավորով 4.5 են:

«Երբ դպրոցն ընդունեցի, 27 աշակերտ ունեին, 10 տարում գրեթե փոփոխություն չկա նրանց թվաքանակում: Ընդ որում, վերջին չորս տարում գյուղական դպրոցներից երեւի մերը միակն է, որտեղ դպրոցականների քանակն ավելանում է, ոչ թե նվազում: Այստեղ մի պահ 18-

19 երեխա կար, հիմա ավելացել է», - հայտնում է տնօրենը:

Դպրոցում ինը մանկավարժ է աշխատում, հիմնականում բարձրագույն կրթություն ունեն, դասավանդում միջնակարգ մասնագիտական կրթությամբ: Ընդ որում թե՛ մանկավարժները, թե՛ աշակերտները տեղաբնակ են, երբեմն չկա:

Դպրոցը վերջին տարիներին բուհ ընդունվողներ էլ է ունեցել, մասնակցելով առարկայական օլիմպիադաներին՝ հաջողություններ արձանագրել: Սակայն տնօրենը վերջին տարիների մաթեմատիկայի եւ ֆիզիկայի օլիմպիադաների անցկացման կարգն անարդար ու ոչ արդյունավետ է համարում, որից տուժում են փոքր դպրոցների աշակերտները. «Կարգն, ըստ իս, սխալ է. այդ առարկաներից օլիմպիադան անց են կացնում միանգամից ամբողջ հանրապետության աշակերտների համար՝ օճկայն տարբերակով, եւ մրցում են, ասենք, մեր դպրոցի եւ Երեւանի ֆիզմաթ թեթումով դպրոցի, վարժարանների, կրթահամալիրների երեսները: ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 4

տարիներն աշխատանքային ստած համարել, նրանք գոհ կլինեին:

Հաջորդ կանգառը Կապանի զինկոմիսարիատում էր, որտեղ հավաքվել էին Արցախյան ազատամարտի երկրորդ եւ երրորդ կարգի հաշմանդամները: Լեոնիդ Գրիգորյանը ներկայացրեց օրվա խորհուրդը եւ առաջարկեց ազատամարտիկներին գրավոր ներկայացնել իրենց պահանջներն ու առաջարկությունները: «Եթե մենք կարողանանք դրանով ինչ-որ հարց լուծել, խնդիրներ վեր հանել, ապա մեր առաքելությունը կատարված կլինի: Ձեր առաջարկությունների հիման վրա կկարողանանք ձեռնարկել համապատասխան գործունեություն եւ հետամուտ լինել այդ հարցերի լուծմանը», - նշեց նա:

Ձինկոնը ներկաներին տեղեկացրեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության սոցիալական վարչությանը ներկայացրել է պատերազմի հաշմանդամների ցուցակ՝ առողջարանային համալիր այցելելու անվճար ուղեգրերի համար: Նա նշեց, որ հետպատերազմյան տարիներին կային մարդիկ, ովքեր զորացրվելուց հետո գրկվել են իրենց զինվորական աստիճանից: Այժմ նրանք կարող են դիմել զինկոմիսարիատ, կազմել համապատաս-

խան փաստաթղթեր եւ ներկայացնել նախարարություն՝ կոչումը վերականգնելու համար:

Ձինկոնը խոսեց նաեւ պատերազմի մասնակիցների վկայականներ ստանալու կարգի մասին՝ կոչ անելով ներկաներին, որ ուշադիր լինեն եւ արժանիների վկայագրերը ստորագրեն, այլապես պատերազմին չմասնակցած մարդիկ կհավասարվեն իրենց: Նա հույս հայտնեց, որ այդ վկայականները ստանալուց հետո շատ ազատամարտիկների հարցերն ինքնաբերաբար կլուծվեն: «Ձինկոնը, որ առյուծի բաժին ունի մեր կռվում, պիտի անպայման ստանա այդ վկայականը», - նշեց զինկոնը:

Հաշմանդամների միջազգային օրվա առթիվ Կապանի զինկոմ Լ.Գրիգորյանը գրավոր դիմել է նաեւ տարածաշրջանի համեմատաբար խոշոր ձեռնարկություններին՝ այդ հիմնարկներում աշխատող հաշմանդամ ազատամարտիկներին իրենց հնարավորության եւ իրավասության սահմաններում աջակցություն ցուցաբերելու համար:

Առաջինն արձագանքեց Կապանի անտառնտեսության պետ Գարիկ Միրզոյանը: Ճիշտ է, նրա ղեկավարած կառույցում հաշմանդամ ազատամարտիկ չի աշխատում, բայց նա համապատասխան

միջնորդագիր է ներկայացրել վերադաս ղեկավարությանը՝ 1-2 հաշմանդամ ազատամարտիկի վառելափայտ տրամադրելու համար: Այուրեքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Արթուր Խաչատրյանը վերադասին գրություն է ուղարկել՝ իր հիմնարկում աշխատող մեկ հաշմանդամ ազատամարտիկին 30 հազար դրամի աջակցության թույլտվություն ստանալու համար: Հայաստանի էլեկտրական ցանցերի «Տաթեւ» մասնաճյուղի տնօրեն Արայիկ Գրիգորյանը 50 հազար դրամ հատկացրեց էլցանցում աշխատող հաշմանդամ ազատամարտիկին: Ձինկոնը նշեց, որ վերադասին ուղարկվող գրության մեջ կնշվեն այն կազմակերպությունները, որոնք այդ հարցում թեկուզ փոքրիկ ներդրում են ունեցել:

«Մենք միշտ էլ ուշադրության կենտրոնում ենք պահում զոհված ազատամարտիկների, անհայտ կորած զինվորների ընտանիքները, ինչպես նաեւ հաշմանդամ ազատամարտիկներին: Ես կարծում եմ, որ եթե յուրաքանչյուր հրամանատար իմանա իր գումարտակի զոհված ազատամարտիկի գերեզմանի տեղը, ուշադիր լինի նրա ծնողների հանդեպ, հնարավորության սահմաններում աջակցի



Դեկտեմբերի 3-ին Լ. Գրիգորյանն այցելեց 1-ին կարգի հաշմանդամ Արմեն Համբարձումյանին

նրանց, ապա մեզանում շատ հարցեր կլուծվեն», - ամփոփեց իր խոսքը Լեոնիդ Գրիգորյանը:

Վերջինս ամեն տարի այցելում է մեր հանրապետության ողջ տարածքում իր գումարտակի զոհված ազատամարտիկների գերեզմաններ, բարեկարգման աշխատանքներ կա-

տարում այնտեղ, անհրաժեշտության դեպքում շիրմաքար դնում: Ազատամարտիկ Մանվել Վարդանյանի թոռան՝ 4-ամյա Դավիթ հայրենաշունչ երգերը երկիրը հայրենասերներով պահելու ու պաշտպանելու վկայությունն են:

ՄՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





# Փոքր դպրոցի խնդիրները՝ օլիմպիականներից մինչև կադրի ընտրությունն ու ֆինանսավորում

ՍԿԻՉԲԸՒ ԷՋ 3

Մեր աշակերտները, որ քաղաքային եւ մարզային փուլերում միշտ լավագույններից էին եւ մասնակցում էին հանրապետական փուլին, այնտեղ դրսևորում իրենց, գոնե դիպլոմ, պատվոգիր, խրախուսանք էին ստանում: Այժմ միանգամից դուրս են մնում մրցույթից եւ ոչինչ չեն ստանում, հաղթողները միշտ հատուկ թեքումով դպրոցների երեսանցի աշակերտներն են, եւ մերոնց հանրապետական փուլին մասնակցելու շանս չի մնում»:

Սակավաթիվ աշակերտներով դպրոցի պահպանման, զարգացման, կրթության կազմակերպման խնդիրները թվարկելիս՝ պարոն Բաղայանը փաստում է, որ դրանք բոլորը շաղկապված են միմյանց: Նախեւառաջ նա նշում է որակյալ մանկավարժական կադրերի խնդիրը. ինը մանկավարժ ունեն, մինչդեռ բարձր դասարաններում 15-16 առարկա են անցնում: Դպրոցն ի սկզբանե հնարավորություն չուներ մասնագետ ուսուցիչ ունենալ բոլոր առարկաների համար, եւ իրենց մանկավարժներից յուրաքանչյուրը 2-3, նույնիսկ 4 առարկա է պարապում: «Եվ դրա պատճառը նախ ֆինանսավորման կարգն է, այն դրա հնարավորությունը չի տալիս: Ասենք, քիմիա կամ կենսաբանություն առարկան դպրոցում ընդամենը կարող է 3-3.5 ժամ լինել, որովհետեւ դասարանները թերկումպլեկտավորվում են, դրսից մասնագետն էլ այդքան ժամի համար չի գա, դիմում ենք այստեղ ունեցած կադրերին»:

Օրինակ, այս պահին մրցույթ են հայտարարել դասվարի թափուր հաստիքի համար, դիմող չկա, բայց կարգը ստիպում է անընդհատ ու անվերջ հայտարարություն տալ, մինչեւ ե՛րբ... Իսկ թափուր հաստիքի մրցույթը ենթադրում է զուտ մասնագիտական բարձրագույն կրթություն: «Այնպիսի տպավորություն է, որ այդ կարգն ընդունողներն ընդհանրապես տեղյակ չեն, թե փոքր դպրոցներում ինչ է կատարվում, - նեղարտում է տնօրենը, - եթե քաղաքի դպրոցներում մեկ տեղի համար կարող է մեծ մրցակցություն լինել, այստեղ դիմող չկա, եւ ըստ օրենքի, ախր, չես էլ կարող մարդուն աշխատանքի ընդունել,



որ վերջերս կայացած խորհրդակցության ժամանակ, նաեւ իրենց առաջարկությունների հիման վրա, քննարկվել է մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցներում դասարանների փոխարեն ուսումնական խմբեր ձևավորելը: Եթե այս տարբերակը հաստատվի, այն նման կրթօջախների համար փրկություն կլինի: Այդ դեպքում եւս, ճիշտ է, կոմպլեկտավորում է լինում, բայց ձևավորվում է 8 ուսումնական խումբ, եւ եթե Վ.Խոտանանի դպրոցը հիմա աշխատում է 4.5 կոմպլեկտ դասարանով եւ ֆինանսավորվում դրա համար, 8-ի դեպքում դասաժամերն ու դրանց համար հատկացվող գումարը կավելանան, եւ կարող են, օրինակ, առանձին պատմության ուսուցիչ ընդունել: Դպրոցը երբեւէ չի վերանորոգվել: Ամենացավոտ ու հրատապ լուծում պահանջող խնդիրն ավերված տանիքն է, որի պատճառով տեղում

ներից հետո վնասվում է նաեւ դպրոցի ներսը, խոնավանում ու բորբոսում են առաստաղներն ու պատերը: Իս.Բաղայանը նշում է, որ սեփական ռեսուրսներով կարող են տարեկան գոնե մեկ դասասենյակ վերանորոգել, բայց նման տանիքի պարագայում դա անհիմաստ է: Խնդրի լուծման համար իրենց դիմումներն առայժմ անարձագանք են մնացել... Նյութական ներդրում վերջին տարիներին միայն «Վորլդ Վիժն»-ի կապակցությամբ գրասենյակն է կատարել, որի հետ ակտիվ համագործակցություն կա. դպրոցում տարբեր ծրագրեր է իրականացրել, վերանորոգել սանհանգույցները, գրադարանն ու համակարգչային սենյակը, դահլիճն ու մարզահրապարակը: Տարբեր ծրագրեր իրականացնելիս «Վորլդ Վիժն»-ը աջակցել է նյութական միջոցներով, իսկ կամավոր աշխատուժը եղել է համայնքից. հենց գրադարանում տնօրենը ցույց է տալիս այս ծրագրերի շրջանակում իր իսկ ձեռքով պատրաստած գրադարակները. հարուստ գրադարանում տեղավորել են նաեւ Շրվենանցի դպրոցի վերակազմավորումից հետո այստեղ տեղափոխած գրքերը: Շրվենանցից բացի, վերակազմավորման միջոցով Վ.Խոտանանի միջնակարգ դպրոցին են միացվել նաեւ Առաջածորի եւ Անտառաշատի դպրոցները: Խաչիկ Բաղայանն ասում է, որ տվյալ գյուղերում, եթե 1-2 աշակերտ էլ լինի, կարելի է տեղում տարրական կրթություն կազմակերպել: Բայց Շրվենանցում եւ Առաջածորում երե-



ԱՆՍԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ Դպրոցի նախկին տնօրեն

խա չկա, իսկ Անտառաշատի մի քանի աշակերտին ծնողները գերադասում են Օխտարի դպրոց ուղարկել: Խոսելով գյուղապահպանության եւ նման դպրոցները փրկելու մասին՝ տնօրենն իր սկզբունքն է ներկայացնում. աշխատակազմում ձգտում են հիմնականում ընդգրկել այն համագյուղացիներին, որ երեխաներ ունեն դպրոցում: Լուրջ կրթություն ստացած եւ գիտելիքների տպավորիչ պաշարով, յուրօրինակ աշխարհայացքով տնօրենն ու իր կինն էլ գալով ու հաստատվելով այստեղ, իրենց երեք զավակին տեղում կրթություն տալով՝ գյուղապահպանման ու դպրոցի շունչը տեղը պահելուն օգնող օրինակ են... «Մեր աշակերտների թիվը դեռ պահպանվում է... Եթե հարեւան գյուղերին նայեք, ընդհանրապես մարում են. երբ այս դպրոց եկա, մեր աշակերտների կրկնակի թվին հավասար աշակերտ Տանձավերում կար, հիմա այնտեղ 12 երեխա հազիվ կա, Աղվանիում՝ 6-7, - ցավում է մեր գրուցակիցը: - Դրա համար զոռնե ուսումնաժամանակ կազմում հարկավոր է ընդգրկել այն մարդկանց, որ երեխաներ ունեն, որովհետեւ երիտասարդ ընտանիքները հիմնականում աշխատանքի պատճառով են հեռանում գյուղերից: Միգուցե կոչտ պայման եմ դնում, բայց մեր աշխատողներին էլ եմ ասում, որ եթե այս դպրոցում աշխատում են, եւ իրենց երեխան այստեղ չի սովորում, դա ճիշտ ու բարոյական չէմ համա-

րում...»:

Իսկ փոքր դպրոցների սուղ բյուջեի գոյացման մեջ տարակուսանքների տեղիք է տալիս ֆինանսավորման ներկա կարգը: Նախ, այն նույն ծեծով է բոլորի համար՝ աշակերտ-թվով, բայց քանի որ օրենքով պետական լիազոր մարմնին թույլատրված է վերաբաշխումներ անել, փոքր դպրոցներից վերցնում եւ հատկացնում են ավելի շատ աշակերտ ունեցողներին, որոնք էլ իրենց հերթին աշակերտ-թվով ֆինանսավորման սահմաններում չեն կարող տեղավորվել: Մինչդեռ, տնօրենի փոխանցմամբ, եթե նախատեսված գումարն ամբողջությամբ իրենց հասներ, դպրոցի վիճակը շատ լավ կլիներ:

Դպրոցում ակտիվ է աշակերտական խորհուրդը. միջոցառումներ, սպորտային մրցումներ, ցերեկույթներ է կազմակերպում: Իսկ այս արտադպրոցական խմբակների, ֆակուլտետի պարապմունքների մասին խոսք լինել չի կարող: Իհարկե, կան երեխաներ, որ կուզենային դասերից դուրս պարապմունքների գնալ, բայց գյուղում չկա այդ հնարավորությունը: «Մինչեւ 5 միավոր դասարան ունեցող դպրոցներն իրավունք չունեն խմբակներ պահել, 5-ից բարձրը շաբաթական 11 ժամ կարող են», - հայտնում է պարոն Բաղայանը: Իսկ երեխաները, որ, օրինակ, արվեստի այս կամ այն ճյուղի հանդես պահում ու շնորհ ունեն եւ կցանկանային նման պարապմունքների հաճախել, կրկին զրկված են դրանից. պարի, մկարչության կամ երաժշտության դասատուին ինչպե՞ս եւ ի՞նչ միջոցներով գյուղ բերես... Այսպիսով՝ երեխաների հավասար իրավունքներից, միջազգային կոմպենցիաներից զորուզիչը խոսող, քննարկումներ ու սեմինարներ կազմակերպող մեր երկրում գյուղի եւ քաղաքի երեխաները դպրոցում են դրանից դուրս կրթվելու եւ իրենց կարողությունները զարգացնելու հավասար հնարավորություններ չունեն... Եվ, ի վերջո, տեսնելով գյուղերի ծերացման, ծնունդների նվազման միտումը, ինչպիսի՞ն է տեսնում մեր գրուցակիցը գյուղական դպրոցի ապագան: «Միգուցե դպրոցը գյուղում եղած երեխաների հաշվին, եթե աճ չլինի, ամենաշատը 10 տարի եւս գոյատևի, հետո կհասնենք հարեւան գյուղերին...», - ցավով կանխատեսում է Խաչիկ Բաղայանը:

Ի դեպ, դպրոց մեր այցելության օրը (նոյեմբերի 13) համընկավ կրթօջախի աշակերտական խորհրդի կազմակերպած միջոցառմանը: Այն նվիրված էր ՏԻՄ օրվան, եւ դպրոցականները հանդիպման էին հրավիրել գյուղապետին ու համայնքի ավագանու անդամներին՝ շնորհավորելու անցած տոնի կապակցությամբ: Զիացնող ու գեղեցիկ հայերեն խոսքով, անկաշկանդ ու անկեղծ մթնոլորտում աշակերտները ՏԻՄ անդամներին պատմեցին Սյունիքի աշակերտական խորհուրդների ցանցի մասին, նշելով, որ իրենք են միացել են դրան, ներկայացրին իրենց աշխատանքները, անելիքները: Աշակերտները նաեւ ուզում էին իմանալ, թե ինչպես ԱԽ-ն կարող է համագործակցել ՏԻՄ-ի հետ, նաեւ գյուղապետից խնդրեցին համայնքի վարչական քարտեզը, որի վրա հենվելով՝ ցանկանում են կառուցել իրենց պատկերացրած վերին խոտանանի մանրակերտը: Քննարկումներից ու զրույցից հետո աշակերտները ներկաներին հյուրասիրեցին ՏԻՄ օրվան նվիրված եւ իրենց ձեռքով պատրաստած տորթով:

Իսկ միջոցառման մասին պատմող նյութում, որն աշակերտները տեղադրել են Սյունիքի ԱԽ ցանցի բլոգում, նշվում է նաեւ «Սյունյաց երկրի» հետ հանդիպման մասին:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

### Մարզի գյուղեր

# Աշոտականում ոչնչանում են մեղուները, իսկ մասնագետները գլուխ չեն հանում

ՍԿԻՋԸՐ՝ ԷՏ 1

տասներկու ընտանիքի կողմից եւ հետագայում ավելանալով ու լրացվելով Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջանների մի քանի գյուղերից վերաբնակեցված ընտանիքներով՝ կազմավորվել է արդեն ինքնուրույն համայնք: 1870-76թթ. գյուղն ամբողջությամբ կառուցվել է, եւ քանի որ նրա շրջակայքը հարուստ էր կավով, նորակառույց տների պատերը կավով ծեփվել ու սպիտակեցվել են, ուստի գյուղի տները սպիտակ գույնի էին, որի պատճառով գյուղն անվանվում է Աղբեճ (պարսկերենից թարգմանված նշանակում է «Սպիտակ գյուղ»):

1978թ. մարտի 30-ին հանձնվեց Բաղրամյանի առաջարկությամբ Մեծ հայրենական զոհված իր մարտական ընկերոջ՝ Աշոտ Սարգսյանի հիշատակին գյուղը վերանվանվել է Աշոտական (Աշոտ Սարգսյանը մեծանուն պատմաբան Նիկողայոս Աղոնցի քրոջ՝ Շուշանի որդին է): Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտեր մեկնեց 161 աղբեճից, որից 72-ը չտեսավ հայրենի գյուղի վրա բացվող խաղաղ առավոտները: Երախտապարտ աշոտականցիները մարտերում ընկած համագյուղացիների հիշատակը հավերժացրել են՝ գյուղին հարակից բլրի վրա կառուցելով հուշարձան-կոթող, որի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1972 թվականին:

1960-ականներին Որոտանի հիդրոէլեկտրակայանի համակարգը կառուցելու համար գյուղի տարածքը մնալու էր Տոլոսի ջրամբարի տակ, որի պատճառով նախկին գյուղից հյուսիս-արեւմուտք կառուցվեց նոր բնակավայր, որ բնակեցվեց 1970 թվականի առաջին կեսում: Ջրի տակ անցավ հին գյուղատեղին, մնաց միայն Սբ Դավիթի մեկ եկեղեցին, որ ջրամբարի լցվելուց հետո էլ կանգուն մնաց ջրի մեջ:

Արցախյան պատերազմից անմասն չմնացին աշոտականցիները: Գոյամարտին աշոտականցիներն ընդգրկված էին «Սիսական» զնդուն եւ մասնակցել են Ձանգելանի, Կուբաթլիի, Լաչինի, Քելբաջարի (Քարվաճառ) ազատագրման կռիվներին: Նրանցից հինգը իր կյանքը դրեց հայրենիքի փրկության զոհասեղանին՝ Սպարտակ Ղարիբյան, Վահան Գրիգորյան, Գագիկ Ղեւոնդյան, Արթուր Զակարյան, Արտյոմ Ունանյան:

Այնուամենայնիվ, գյուղն առանց հավատի տաճարի չմնաց: Այդ բացը լրացրեց աշոտականցի բարերար Շողիկ Ներսիսյանը, ում հովանավորությամբ գյուղին հարակից բլրի ստորոտին կառուցվեց Կաթողիկե սուրբ խաչ եկեղեցի-մատուռը: Եկեղեցու բացումը եւ օծումը տեղի ունեցան 2008-ի հունիսի 15-ին, որը դարձավ Աշոտականի բնակչության սրբատեղին: Համայնքի ղեկավարի միջնորդությամբ գյուղի ավագանին Շողիկ Ներսիսյանին շնորհեց Աշոտականի պատվավոր քաղաքա-

ցու կոչում:

### Գյուղի այսօրը

Համայնքի ղեկավար Արմեն Բեգլարյանի փոխանցմամբ՝ վերջին մարդահամարի տվյալներով՝ գյուղում հաշվառված է 640 մարդ, փաստացի բնակվում է 480-ը: Վերջին 20 տարում Աշոտականի բնակչության թիվը պակասել է 100-ով: Ինչ վերաբերում է արտագաղթին, գյուղից հեռացել է տասը-տասներկու ընտանիք, իսկ ընդհանրապես 28-30 երիտասարդ տարվա ընթացքում մեկնում է արտագնա աշխատանքի: Սփոփող հանգամանք է այն, որ յուրաքանչյուր տարի 0-6 տարեկան երեխաների աճ է գրանցվում, եւ համայնքային հաշվարկներով՝ մի քանի տարի հետո գյուղի դպրոցի աշակերտների թիվը կտատանվի 90-100-ի սահմաններում: Գյուղում մեծ հարսանիքներ են լինում (այս տարում՝ երեք), մեծ վեց ծնունդ է գրանցվել: Գյուղի մանկապարտեզ 25 մանուկ է հաճախում, նախակրթարանը պահելու համար ծախսվում է տեղական բյուջեի առյուծի բաժինը (զրուցակցիս ձեռնարկում է): Բայց ամեն գնով ձգտում են պահպանել նախակրթարանը, մանկանոցը որ հարեւան թասիկ եւ Հացավան համայնքներից էլ են երեխաներ հաճախում: Մանկապարտեզը հիմնադրոգվել է եւ կահավորվել «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպության ֆինանսավորմամբ (հատկացրել է 10 մլն դրամ), համայնքը համոզես է եկել որպես համաֆինանսավորող (տրամադրել է չորս մլն դրամ): Ի դեպ, տեղական բյուջեի մասին: Պետական լրավճարի հետ միասին կազմում է 10 մլն դրամ, ձեռավորվում է հողի հարկից եւ գույքահարկից. «Այլ եկամուտներ չունենք, - կրահում է միտքս Ա.Բեգլարյանը, - գյուղը սակավահող համայնք է, մեկ ծխին ընկնում է 1.4 հա հող: Բացի տնամերձերից Աշոտականը ոռոգելի այլ հողեր չունի: Սահմանափակ են արոտները, ոչ արդյունավետ, ինչը չի նպաստում անասնապահության զարգացմանը: Գյուղացու միակ հույսը մնացել է սեփական տնամերձը, վարելահողը 340 հա է, ինչը մեծ համայնքի համար փոքր թիվ է: 168 հա հող մնացել է Տոլոսի ջրամբարի տակ: Այդքանի դիմաց կառավարությունը համայնքին հատկացնում է 420 հազար դրամ փոխհատուցում, որն այս դեպքում խորհրդանշական գումար կարելի է համարել: Ժամանակին այդ որոշման դեմ բողոքել ենք, ի դեպ, մնան մտահոգություն ունեն նաեւ հարեւան համայնքները՝ Տոլոսը եւ այլն: Բայց կառավարությունը մնում է անդրդվելի»:

Ուշագրավն այն է, որ գյուղը հիմնականում զբաղվում է ազնվամորու (малина) մշակությամբ: Դեռ ավելին, դա դառնում է գյուղի համար ավանդական ճյուղ: Ինչպես Արմեն Բեգլարյանն է փաստում,



բանջարաբուստանային մշակաբույսերի (ասենք՝ կարտոֆիլի) փոխարեն ազնվամորու են աճեցնում: Բավականին ձեռնու է, մանավանդ իրացման խնդիր չկա, եւ հատապտղի կիլոգրամը գնվում է 800-900 դրամով: Իրողությունն այն է, որ ավելանում են ազնվամորու ցանքատարածությունները:

Ոռոգման եւ խմելու ջրի խնդիր չկա համայնքում: Խմելու ջրի ներքին ցանցը նորոգված է, եւ տնտեսություններն ապահովված են շուրջօրյա ջրամատակարարմամբ: Նախանցյալ տարի Բռնակոթի ջրակուտակիչ ավազանից ոռոգման ջրի նոր ջրագիծ էր անցկացվել: Արդեն հիշատակեցինք գյուղի մատուռը կառուցած բարերարի մասին: Համայնքին օգնության ձեռք մեկնողն են այլ բարեգործներ, մանավանդ արտերկրում բնակվող: «Առայժմ նրանց օժանդակությունը չենք տեսել, խոստացել են իրենց գործերը լավանալու պես անպատճառ օգնել», - ասում է զրուցակիցս:

### Ավանի աշոտականցիներ

Աշոտականը տվել է գիտության դոկտորներ եւ պետական գործիչներ, զինվորականներ: Գյուղի երեւելի զավակների, ինչպես նաեւ Աշոտականի կազմավորման, նրա ընթացքի, ժողովրդի խոսվածքի, ավանդույթների մասին տեղեկություններ կարելի է քաղել այդ գյուղի ծնունդ Արշակ Դուկասյանի «Աշոտական» գրքուկից, որ այս տարի է լույս տեսել:

Հայրենական մեծ պատերազմում դիվիզիայի 20 հրամանատարից երկուսն աշոտականցիներ են՝ ընդ որում՝ նույն ընտանիքից (քրոջ որդիներն են մեծանուն հայ պատմաբան, բյուզանդագետ Նիկողայոս Աղոնցի): Աշոտ Սարգսյանը տաղանդավոր եւ բազմակողմանի զարգացած զինվորական էր: Մարշալ Բաղրամյանը մշտապես գնահատել է նրա տաղանդը: Երբ սկսվեց Մեծ հայրենականը, գնդապետ Աշոտ Սարգսյանի դիվիզիան պատերազմի ամենադաժան հորձանուտներում էր: Չնայած թշնամու զորքերի քանակական գերազանցությանը՝ դիվիզիան մի քանի անգամ կարողացել է դուրս գալ շրջափակումից: Հրամանատարը գոհվել է ուկրաինական Վիննիցա քաղաքի համար մղվող անհավասար մարտում: Թաղվել է հոսպիտալի բակում: Ի դեպ, Հովհաննես Բաղրամյանն է եղել թաղման արարողության կազմակերպիչը:

Նրա եղբայր Անդրանիկ Սարգսյանը Մոսկվայում ստացել է ռազմական կրթություն, ծառայել է խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում: 1942թ. վերակազմավորել է հայկական 89-րդ (հետագայում՝ Թամանյան) դիվիզիան եւ եղել նրա հրամանատարը: Այնուհետեւ առաջին Բելառուսական ռազմաճակատի կազմում՝ որպես 155-րդ դիվիզիայի հրամանատար, մասնակցել է ռազմական բոլոր գործողություններին եւ Բեռլինի ազատագրմանը: Պատերազմից հետո Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում նշանակվել է տակտիկայի դասախոս: 1949-53թթ. անհիմն բռնադատվել է, առանց դատավճռի պահվել Նովոչերկասկի բանտում: Ազատվելուց հետո աշխատել է պատերազմի վետերանների Մոսկվայի քաղաքային վարչությունում, «Գիտելիք» ընկերության մասնաճյուղերում: Մահացել է 1965թ. Մոսկվայում:

Գյուղի երեւելի զավակներից է պետական գործիչ Գրիգոր Հասարթյանը, ով եղել է Լենինականի եւ Երեւանի քաղաքային գործկոմի նախագահ, զբաղեցրել կարեւոր այլ պաշտոններ: Նրա անվան հետ են կապում Լենինականում եւ Երեւանում քաղաքաշինության արմատական խնդիրների իրականացումը, բնակչության սպասարկման ձեռքերի ու մեթոդների նորոգումը:

Սիսիանի շրջանը ղեկավարած մարդկանց մեջ առանձնացել է Սիմոն Սարգսյանը, ում պաշտոնավարման օրոք գյուղատնտեսության բնագավառի մի խումբ աշխատողներ արժանացան սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Ակտիվորեն մասնակցել է Մեծ հայրենականին (դիվիզիայի զնդի հրամանատարի քաղաքով տեղակալն էր), հետպատերազմյան տարիներին հանրապետության մասշտաբով ղեկավար պաշտոններ է վարել:

Աշոտականի ծնունդ է նաեւ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ավագ Ավանեսյանը, ով 1975 թվականից դասավանդում էր Երեւանի ժողտնտեսության ինստիտուտում, նախ՝ արդյունաբերության պլանավորման ամբիոնի վարիչ, այնուհետեւ՝ 1984-ին, նշանակվել է բուհի գիտական գծով պրոռեկտոր, որտեղ աշխատել է մինչեւ կյանքի վերջը: Հոր հետքերով է գնացել տնտեսագիտության թեկնածու Վահրամ Ավանեսյանը, ով հանրապետության կառավարության կազմում բարձր պաշտոններ է զբաղեցրել, այդ թվում՝ ՀՀ էկոնոմիկայի նախա-

րարի պաշտոնը:

### Համայնքի հիմնախնդիրները

Համայնքի ղեկավարին խնդրեցինք ներկայացնել գյուղի առջեւ ծառայած հիմնախնդիրների շրջանակը: Պարզվեց, որ առաջին պլանին Աշոտականի գազիֆիկացումն է, քանի որ այն հեռու է անտառներից, եւ ձմռանը բնակիչներն իրենց տները ջեռուցելու այլընտրանք չունեն: Գազատարն անցնում է գյուղից 4-4.5 կմ հեռավորության վրա, սա որոշակի խնդիր է հարուցում: Բայց եթե կապույտ վառելիքը հասնի գյուղ, անհատական տներին դյուրին կլինի այդ գյուղում, մանավանդ ձմռան ամիսներին, երբ աշոտականցիներն իրենց բնակարանները տաքացնելու լուրջ խնդիր ունեն: Վառելիքը գյուղ ներկրում են դրսից, եւ ներկրողն իր գինն է առաջարկում: Չերկարացնենք՝ գյուղաբնակի վրա վառելիքային մեկ խորանարդ մետրն արժենում է 22-23 հազար դրամ, իսկ յուրաքանչյուր ընտանիք ձմռան տարեշրջանում օգտագործում է յոթ-ութ խորանարդ մետր վառելիքային, դրան գումարած այս կողմերում տարածված ավանդական վառելիքով՝ աթարը, իսկ ընդհանրապես, գյուղապետի հավաստմամբ, գյուղաբնակների 30-40 տոկոսը տները տաքացնում է հենց ավանդական վառելիքով: Գյուղաբնակի համար հաջորդ խնդիրն իր արտադրած գյուղմթերքի իրացումն է, մանավանդ մսի: Ջրուցակիցս հայտնում է, որ տարեկանը վարկերի վերադարձման ժամանակն է, իսկ վարկառու է գյուղի 90 տոկոսից ավելին: Աշոտականցին պատահական վայրում է միսն իրացնում, մի մասին հաջողվում է, մյուսին՝ ոչ: Կարտոֆիլն այս անգամ իրացվել է, իսկ կաղամբը՝ ոչ: Գյուղում հինգ-վեց ընտանիքից յուրաքանչյուրն աճեցրել ու հավաքել է 10-12 տոննա կաղամբ, իսկ ընդհանուր արտադրվել է մոտ 100 տոննա կաղամբ, որ պիտի իրացվի, բայց ինչպե՞ս...

Գյուղում յոթ-ութ ընտանիք զբաղվում է մեղվաբուծությամբ, բայց վերջին շաբաթներին ինչ-որ հիվանդություն է տարածվել, որից մասսայաբար ոչնչանում են մեղուները, իսկ մեղվապահներն ու մասնագետներն առայժմ զլուխ չեն հանում դրանից... **ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆԱՆ**

# Իր երկրի փերն էր ու իր ժողովրդի ծառան

## Վճահասանք

**Երկու փասնամակից ավելի է՝ երկրային կյանքից հեռացել է փառանդաշատ երաժիշտ-կապարող, երգահան, մանկավարժ Գառնիկ Խաչատրյանը: Կապանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ նոյեմբերի 28-ին մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում փեղի ունեցավ հուշ-երեկո՝ նվիրված երաժշտության նվիրյալին, հայրենի եզերքի հոգեբերող ապրող մարդուն:**

Վաղ դրսևորվեց Գ.Խաչատրյանի հակունը երաժշտության հանդեպ: Տասնչորս տարեկանում արդեն երաժիշտ-կատարող էր: Այն տարիներին, երբ դեռևս չուներ երաժշտական կրթություն եւ չէր տիրապետում նոտագրությանը, նվագում էր թառ, քամանչա, շվի, դուդուկ, զուռնա, կլարնետ, ակորդեոն, քանոն, ուր, բանբիռ, ջութակ, թավջութակ, շեփոր, տրոմբոն եւ բոլոր գործիքներին զերազանց էր տիրապետում: Եվ միայն 1957-1960-ին ուսանել է Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

1962 թվականից Կապանի N1 երաժշտական դպրոցում դասավանդում էր սոփիստիկ եւ հայ ժողովրդական նվագարաններ, գործուն մասնակցություն է ունեցել այդ կրթօջախի եւ Ղափանի երաժշտական ուսումնարանի ժողգործիքների բաժնիների հիմնարկմանը: Այդ կրթօջախներում եւ թիվ 27 գիշերօթիկ սանատոր դպրոցում ուսուցանում էր ժողգործիքներ, դասավանդում տեսական առարկաներ, վարում երգի-պարի համույթներ, երգչախմբեր: Տաղանդավոր երգահանը հանդես է եկել որպես առաջին խմբավարը եւ պարուսույցը Ղափանում: Նա կազմակերպեց առաջին բազմաձայն երգչախումբը, երգի-պարի անսամբլը՝ 120 մասնակցով: Բազմաթիվ անգամ նրա սաները եւ ղեկավարած խմբերը մասնակցել են հանրապետական հաշվետու համերգների, երաժշտական օլիմպիադաների, տուն դարձել մրցանակների: Ինքը որպես երաժիշտ-կատարող ելույթներ է ունեցել Մոսկվայում, Ռիգայում, Կիևում, Անդրկովկասի մի շարք քաղաքներում, դարձել դափնեկիր, մեդալակիր:

Գառնիկ Խաչատրյանը հայտնի է որպես երգահան: Ստեղծագործություններ է գրել դաշնամուրի, ջութակի, թավջութակի համար: 1965-ին «Ծաղկի, իմ Հայաստան» փառատոնում Գառնիկ Խաչատրյանի թառի կոնցերտն արժանացել է ոսկե մեդալի: Գրել է «Այոնիք» սյուիտը, որ կատարել է Էմմա Ծատուրյանի ղեկավարած անսամբլը: Երգահանի «Իմ Կապան» երգն առաջին անգամ հնչել է 1978 թվականին՝ Հայաստանի հեռուստատեսության եւ ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Նրա ստեղծագործությունների եւ կատարումների մի շարք մտել է Հայաստանի ռադիոյի ոսկե ֆոնդը:

Գառնիկ Խաչատրյանի դիմանկարը թերի կլինի, եթե չնշվի կասարակություն մեջ նրա ակտիվ կենսադիրքի մասին: Նրան ճանաչողների համար, թերեւս, ամենատպալորիչը հայրենասիրությունն էր, որով նա առանձնանում էր նույնիսկ այն տարիներին, երբ չէր թույլատրվում կան

չատերը չէին համարձակվում խոսել հայրենասիրության եւ հայասիրության մասին: Իսկ Արցախյան շարժման տարիների առաջին իսկ օրերից շարժման ակունքներում էր, մարդկանց հորդորում էր պայքարել մեր ժողովրդի այդ հատվածի արդար պահանջատիրության համար: Գառնիկ Խաչատրյանը հայրենի քաղաքի հասարակական կյանքի ակտիվ մասնակից էր, ընտրվել է քաղխորհրդի պատգամավոր, պարզեատրվել էր «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, բազմաթիվ պատվոգրերով: Նրա վաստակը գնահատվեց նաեւ մեր օրերում. շաբաթներ առաջ Կապան քաղաքի օրվա կապակցությամբ նրան հետմահու շնորհվել է «Կապան» ոսկե հուշամեդալ:

...Հուշ-երեկոյին մասնակցում էին Գառնիկ Խաչատրյանի հարազատները, գործընկերները, սաները, նրա արվեստի երկրպագուները, բոլոր նրանք, ովքեր գնահատում են նրա մանկավարժական վաստակը, երաժշտական ժառանգությունը: Երեկոն սկսվեց երգահանի «Կապան» ռապսոդիայի մեղեդիներով: Այնուհետեւ Էկրանից տարածվեց հանրապետության վաստակավոր արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Ռոբերտ Անիրխանյանի խոսքը. «Նրա մեջ կար աշխարհն ընկալելու, աշխարհը սիրելու, աշխարհին նվիրվելու մի տեսակ, զուտ գառնիկախաչատրյանական տեսակ, նա ժողովրդական գործիքների վիրտուոզ կատարող էր, եւ այդպիսի նվագող մարդը, այդպիսի ընդունակություններ ունեցող անձնակորությունը չէր կարող չստեղծագործել: Նա շատ արագ ստեղծագործում էր ժողովրդական մի մեղեդի եւ իսկույն որեւէ գործիքով նվագում: Կարելի է ասել, որ ստեղծագործելը նրա համար դուրսն էր մի բան էր...»:

Դահլիճում գտնվողներից շատերն ունեին նրա հետ կապված որեւէ դրվագ, հիշողություն, նաեւ ասելիք: «Մեր քաղաքի տարեգրությունն առանց Գառնիկ Խաչատրյանի թերի կլինի, նրա արվեստը մեզ բոլորիս կրթել, դաստիարակել է»,

– ասաց գեղանկարիչ Հրանտ Էլշյանը եւ դրվագներ ներկայացրեց Գառնիկ Խաչատրյանի երաժշտական գործունեությունից: Հուշերով հանդես եկան նրա երբեմնի սաներ Վարդան Քոչարյանը, Անուշ Դավթյանը, Հովիկ Թովմասյանը՝ արժանին մատուցելով սիրելի ուսուցչին, երաժիշտ-կատարողին: Գործընկերոջ մասին (միասին աշխատել են թիվ 27 գիշերօթիկ-սանատոր դպրոցում) խոսք ասաց Հայաստանի բազային արխիվի Սյունիքի մասնաճյուղի տնօրեն Արշալույս Փափազյանը: Ելույթներում հնչեց նաեւ վաղամեղի Վաչե Եփրեմյանի խոսքը. «Տաղանդավոր մարդը մյուսներից առանձնանում է նրանով, որ կյանքին նայում է այլ աչքերով, տեսնում է այն, ինչ չի տեսնում սովորական մահկանացուն: Հողի սեր, հայրենիքի սեր, մարդու հանդեպ սեր: Այս ամենը լիքը թանաքամանի թաթախումներն են Գառնիկ Խաչատրյանի ստեղծագործություններում: Նա իր երկրի տերն էր ու իր ժողովրդի ծառան: Երջանիկ է այն մարդը, ով շարունակում է ապրել իրենից հետո: Գառնիկ Խաչատրյանն իր համար այդ տեղն ինքն էր ապահովել...»:

Գառնիկ Խաչատրյանը կատարել է մշակումներ, փոխադրումներ: Նրա սաները՝ Նորա Դավթյան, Անուշ Դավթյան, Անահիտ Բաղդասարյան, Հովիկ Թովմասյան, Վարդան Քոչարյան, կատարեցին «Ռուսիական պարը» (փոխադրումը՝ Գառնիկ Խաչատրյանի): Հնչեցին նաեւ երգահանի ստեղծագործությունները՝ «Պարը»՝ ջութակի եւ դաշնամուրի համար, «Էքսպրոմտը», «Պիեսը»՝ թավջութակի եւ դաշնամուրի համար, «Լեռնապարը»: Եկրանից հնչեց նրա երգերից մեկը՝ դստեր՝ Գայանե Սերոբյանի կատարմամբ:

Հուշ-երեկոյի ավարտին երախտագիտության խոսք ասաց Գառնիկ Խաչատրյանի որդին՝ երաժիշտ Արա Խաչատրյանը. «Եթե ոչինչ արած չլիներ Գառնիկ Խաչատրյանը, միայն «Իմ Կապան» երգով նրան հիշելու են սերունդները»: Այդ երգով էլ եզրափակվեց հուշ-երեկոն:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ

# Սիսիանցիների դարը շարունակվում է

## ՎԻՐԱՎԱԿԱՆ

**Դեկտեմբերի 1-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապանի նստավայրում դատավոր Նապոլեոն Օհանյանի նախագահությամբ կայացած դռնբաց դատական նիստում շարունակվեց դատաքնությունը Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի, Նրա նախկին փեղակալ Աշոտ Գրիգորյանի, «Սիսիանի լրատու» ՍՊԸ փնտրելու Արմեն Հովակիմյանի, Նույն ՍՊԸ հաշվապահ Հասմիկ Եսայանի, քաղաքապետարանի ֆինբաժնի պետ Կարեն Դանիելյանի գործերով:**

Ըստ մեղադրական եզրակացության՝ Արմեն Հովակիմյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ աշխատելով «Սիսիանի լրատու» ՍՊԸ տնօրեն՝ կեղծել է իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ եւ այն օգտագործելով՝ խարդախությամբ հափշտակել խոշոր չափերով՝ 1260000 ՀՀ դրամ գումար: Հասմիկ Եսայանին՝ այն բանի համար, որ աշխատելով Նույն ՍՊԸ հաշվապահ, կեղծել է իրավունք վերապահող պաշտոնական փաստաթուղթ եւ այն օգտագործելով՝ խարդախությամբ հափշտակել խոշոր չափերով գումար: Կարեն Դանիելյանին՝ այն բանի համար, որ հանդիսանալով Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ պատշաճ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որի արդյունքում համայնքին անգույքային վնաս: Աղասի Հակոբջանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ լինելով Սիսիանի քաղաքային համայնքի ղեկավար, պատշաճ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որի հետևանքով համայնքին անգույքային վնաս: Աշոտ Գրիգորյանին էլ՝ այն բանի համար, որ լինելով Սիսիանի քաղաքային համայնքի ղեկավարի տեղակալ՝ պատշաճ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որի հետևանքով համայնքին անգույքային վնաս:

ՀՀ օրենսդրության այս խախտումներն ու թերությունները հայտնաբերվել էին 2012-ի դեկտեմբերին Սյունիքի մարզպետարանի աշխատակիցների անցկացրած վարչական հսկողության ընթացքում ֆինանսների բնագավառում կատարված ուսումնասիրությունների արդյունքում: Նախապատրաստված նյութերով 2013-ի օգոստոսին հարուցվել էր քրեական գործ, կատարվել նախաքննություն:

Նիստում Աշոտ Գրիգորյանը հայտարարություն արեց եւ միջնորդություն ներկայացրեց գործը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Դատարանը որոշեց այն կցել գործին, պարզել մանրամասները ու դրան անդրադառնալ հետո: Միջնորդություն ներկայացրեց նաեւ Աղասի Հակոբջանյանի պաշտպան Համլետ Դավթյանը՝ քրեական գործի վարույթն Աղ.Հակոբջանյանի մասով կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Վերջում դատարանն անդրադարձավ բացառապես վկայների՝ որոշելով նրանք բերման ենթարկել, իսկ եթե պարզվի, որ նրանք հանրապետությունում չեն, հիմք ընդունել նախաքննական ցուցմունքները:

պակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 5-րդ մասի 2-րդ կետը Աղասի Հակոբջանյանի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ: Դատարանը մերժեց միջնորդությունը:

Աշոտ Գրիգորյանը մեղադրվում է ուղղակի վաճառքով իր որդու կնոջն անօրինական կերպով հողատարածք օտարելու մեջ: Մնացած չորս հոգու մեղադրանքը կապվում է «Սիսիանի լրատու» ՍՊԸ գործունեությանը:

Բացի նրանից, որ գործը համարության ուշադրության առանցքում է, քանի որ նրանով համայնքի ղեկավար է ՏԻՄ աշխատակիցներ են հայտնվել մեղադրյալի աթոռին, այն կոնկրետ մեզ համար ցավալի են ուշագրավ է այն բանով, որ մեղադրյալի կարգավիճակում հայտնվել է մեր գործընկերը՝ Սիսիանում (եւ ոչ միայն) հայտնի բազմապրոֆիլ լրագրող Արմեն Հովակիմյանը... Գործի առավել մանրամասներին կանդիդատանք հետազայում, սպասենք դատավճիհ: Իսկ մեկ խոսքով՝ Արմեն Հովակիմյանը մեղադրվում է քաղաքապետարանի հետ ունեցած պայմանագրով սահմանված ծավալից պակաս քանակությամբ թերթ լույս ընծայելու, սակայն սահմանվածի դիմաց հանձնման-ընդունման արձանագրությամբ ամեն ամիս գումար ստանալու համար:

Մեղադրվողներից ոչ մեկն էլ իրեն մեղավոր չճանաչեց:

Դատարանը լսեց չորս վկայի՝ քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Վաչագան Սիրաբյանին, քաղաքաշինության բաժնի պետ Կիմ Աղայանին, «Սիսիանի լրատու» ՍՊԸ աշխատակիցներ Աննա Ավետիսյանին («Սիսիանի ծայր» թերթի սրբագրիչ) եւ Սրբուհի Գրիգորյանին (նույն թերթի խմբագիր): Սրբուհի Գրիգորյանը եւ Աննա Ավետիսյանը, մշելով՝ որ «լեզուներն էլ չի պտտվում» Արմեն Հովակիմյանին մեղադրյալ կոչել, փաստեցին նրա անձնական բարոյական բարձր հատկանիշները, անձնուրաց աշխատանքը ՍՊԸ-ում, անվճար մի շարք պարտականությունների համարումը, իր սեփական տեխնիկան այնտեղ օգտագործելով՝ ամեն կերպ խմբագրության աշխատանքին նպաստելը: Հայտնելով, որ իրենց ստեղծագործական եւ ոչ թե ֆինանսական հարցերով են զբաղվել, բայց փոքր կոլեկտիվ են եւ, մեկ սեյնակում աշխատելով, տեղյակ են ընդհանուր գործերից, նրանք գիտեին, որ պակաս տպագրված օրինակների պատճառը ֆինանսների սղությունն է եղել: Իսկ Արմեն Հովակիմյանը, նրանց վկայությամբ, ջանք չի խնայել ՍՊԸ-ի ֆինանսական տարին մի կերպ փակելու համար...

Փակագծերում մշեց, որ նախաքննության եւ դատաքննության ընթացքում չի խոսվում մի փաստի մասին. «Սիսիանի լրատու» ՍՊ ընկերության լրատվական գործունեությունն իր մեջ ոչ միայն թերթի հրատարակում, այլեւ հեռուստաընկերության գործունեություն է ներառում: Եվ եթե անգամ թերթի տպագրությունը պակաս ծավալ է ունեցել, նույն աշխատակազմը փաստացի լրատվական ծառայություն է մատուցել, եթեր է հեռարձակել հեռուստահաղորդումներ եւ աշխատավարձ ստացել դրա համար...

Վերջում դատարանն անդրադարձավ բացառապես վկայների՝ որոշելով նրանք բերման ենթարկել, իսկ եթե պարզվի, որ նրանք հանրապետությունում չեն, հիմք ընդունել նախաքննական ցուցմունքները:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ





# Ինչ է կատարվում Զանգեզուր կենսոլորտային համալիրում

## Բնադահլիճային ծրագրի շրջանակներում

Զանգեզուր կենսոլորտային համալիրի ստեղծման ծրագիրը, որ 33 բնապահպանության նախկին նախարար Արամ Գրիգորյանի նախաձեռնությամբ ժառանգություն է թողել նախարարության ներկայիս աշխատակազմին, դեռ չի կարողանում որոշակիանալ ոչ աշխարհագրության, ոչ ռեժիմի, ոչ սեփական իրավասությունների շրջանակներին հարցում:

2013թ. դեկտեմբերի 19-ին կառավարությունը ընդունեց Զանգեզուր կենսոլորտային համալիրի ստեղծման վերաբերյալ 1465-Ն որոշումը: Արդյունքում բնության հատուկ պահպանվող տարածքներ «Շիկհողի արգելոց» ՊՈԱԿ-ը, «Արեւիկ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, «Սոսու պուրակ», «Զանգեզուր», «Խուստուուկ», «Բողաքար» ու «Սեւ լիճ» պետական արգելավայրերը կորցրեցին իրենց կարգավիճակը: Բնապահպանության նախարարության ընդհանուր պորտֆոլիոյի ներքո գտնվող ինքնուրույն կառավարվող միավորներից նրանք վերածվեցին մոտ 60 000 հեկտարի հասնող հսկայական տարածքի, որն ունի մի կառավարում:

Այդ որոշման բացասական հետևանքներն արդեն իսկ ի հայտ են գալիս: Առաջին հերթին խոսքը «Շիկհող» արգելոցի մասին է, որն առանձնանում է իր յուրահատուկ կենսաբազմազանությամբ: Նախկինում արգելոցի զարգացումն իրականացվում էր միջազգային դոնորների միջոցների հաշվին: Բայց թե ինչպես են ծախսվելու այդ միջոցները, երբ այն դարձել է Զանգեզուրի համալիրի մի մասը, հասկանալի չէ:

Մինչ օրս հաստատված չեն Զանգեզուրի համալիրի սահմանները: Սա նշանակում է, որ գործնականում անհնար է կանգնեցնել ցանկացած գործունեություն, որը կհակասի համալիրի պահպանմանը եւ կխախտի ռեժիմը. չկա սահման, չկա արգելք: Եւ դա արդեն իսկ կատարվեց «Արեւիկ» ազգային պարկի մեջ մասնակիորեն մտնող Մեղրասարի ոսկու հանքավայրի բաց շահագործման նախագծի հասարակական լուծման ժամանակ: Ազգային պարկն ունի սահմաններ, որոնք հաստատվել են պարկի ստեղծման ժամանակ, իսկ Զանգեզուրի կենսոլորտային համալիրը, որի մեջ մտնում է այդ ազգային պարկը, հաստատված սահմաններ չունի:

Նշենք, որ Զանգեզուր կենսոլորտային համալիրի ստեղծման մասին որոշմանը ոչ քիչ նպաստեց գերմանական KfW բանկի հետ կնքված պայմանագիրը, որը պետք է 8.2 միլիոն եվրո տրամադրի համալիրի զարգացման համար: Գումարները դեռ չեն փոխանցվել:

Բնապահպանության նախարարությունը «կանաչ» լույս վառեց Մեղրասարի ոսկու հանքավայրի շահագործման համար: **27 նոյեմբերի 2014թ. էլոուր**

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Ույծի մանկապարտեզի վարիչ Ջուլիետա Մուրադյանին՝ հոր՝ Ֆրիդոն Մուրադյանի եւ քրոջ 18-ամյա թոռան՝ Գրիգոր Մանուչարյանի մահվան կապակցությամբ:



# Էկոլոգիա եւ շրջակա միջավայր

## Ղազարյան

**Նոյեմբերի 14-ին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի (ՀՕՕԿ) Սյունիքի մարզի ներկայացուցչությունը Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) Կապանի մասնաճյուղում միավորել էր փարածաշրջանի ֆիզկուլտուրայի մասնագետներին եւ կազմակերպել «Էկոլոգիա եւ շրջակա միջավայր» թեմայով դասընթաց:**

Ղազարյանը մասնակցել են տարածաշրջանի ֆիզկուլտուրայի մասնագետներ, ԿԱԻ-ի եւ տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչներ (թվով՝ 30 հոգի):

Հանդիպման սկզբում ներկայներին ողջունեց ՀՕՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչության տնօրեն Արշամ Սարգսյանը՝ կարեւորելով էկոլոգիական եւ շրջակա միջավայրի բնապահպանական խնդիրները մարդկությանը՝ առավելապես մարզիկների առողջության եւ կենսագործունեության բնագավառում:

Այնուհետեւ զեկույցներով հանդես եկան ՀՕՕԿ-ի գրասենյակի համակարգող Սաննե Հակոբյանը, Կապանի N1 հիմնական դպրոցի հայրը լեզվի եւ գրականության ուսուցչուհի Սոնա Բաղդասարյանն ու ԿԱԻ-ի գլխավոր մասնագետ Լիլիթ Բաբայանը:

Ելույթներում եւս մեկ անգամ ազդարարվում էր, որ մեր իրականության մեջ էկոլոգիական եւ բնապահպանական հիմնահարցերը զնալով մեծ զարգացում են ապրում, եւ պետք է սեփական քայլերով օրինակ ծառայել համայնքակններին:

ՀՕՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչությունը հյուրերի համար պատրաստել էր անակնկալ՝ հյուրերը համատեղեցին օլիմպիական լոգոյով պատկերված տոնական տորթը՝ մտերմիկ սեղանի շուրջ ծանոթանալու, ավելի արդյունավետ

քննարկում ակնկալելու համար:

Հանդիպման ավարտին Ա.Սարգսյանը շնորհակալություն հայտնեց ներկայներին՝ միջոցառմանը մասնակցելու, ինչպես նաեւ ԿԱԻ-ի Կապանի մասնաճյուղի աշխատակազմին՝ դասընթացի կազմակերպչական աշխատանքներին աջակցելու եւ անմասն չմնալու կապակցությամբ...

Նոյեմբերի 19-ին ՀՕՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչությունը Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան եւ աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցների սաների ու մարզիչների մասնակցությամբ եւ աջակցությամբ Բաղաբուրջի հուշահամալիրում կազմակերպեց «Էկոլոգիա եւ շրջակա միջավայր» թեմայով դասընթացի երկրորդ գործնական հանդիպումը:

Հանդիպման սկզբում մարզադպրոցի սաներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին զոհված պատանարտիկների հիշատակին, այնուհետեւ հուշարձանի տարածքում սկսեցին սանիտարական մաքրման եռանդուն աշխատանք:

Արից մաքրված բացատում երեխաներն իրականացրեցին ծառատունկ: Աշխատանքներին աջակցեց «Խուստուուկ» բնապահպանական ՀԿ-ն:

Աշխատանքները ընթացան պլանավորվածի համաձայն: Երեխաները գոհ էին իրենց կատարած աշխատանքից, ինչի մասին վկայում էր տարածքի մաքուր եւ բարեկեցիկ տեսքը...

ՀՕՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչության տնօրեն Արշամ Սարգսյանը վստահեցրեց, որ նման ծրագրերը կլինեն շարունակական եւ հետագայում այդպիսի միջոցառումներ կիրականացվեն մարզի այլ համայնքներում:

**ՀՕՕԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչություն**

**Այունյաց երկիր**

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՄՅՈՒՆԵՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԳՆԱԿՆԱԿԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԵՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
 Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:  
 Էլ. փոստ՝ syuniacyerki@mail.ru  
 Ինտերնետ՝ www.syuniacyerki.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱՋՂ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Գրումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպարանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.12.2014թ.:

# Համայնքային բյուջեի 80%-ը՝ աշխատավարձի ֆոնդ

## Հանրային լուսն

Դեկտեմբերի 5-ին Կապանի քաղաքապետարանի դահլիճում կազմակերպված հանրային լուսնը նվիրված էր Կապանի սոցիալ-դեմոկրատական զարգացման 2013-16թթ. ծրագրով նախատեսված աշխատանքների ամփոփմանը եւ 2015-ի համայնքային բյուջեի նախագծին: Քննարկմանը հրավիրված էին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, տնտեսվարող սուբյեկտների ղեկավարներ, քաղաքապետին կից հանրային խորհրդի անդամներ:



Ռաստած տեսանյութի միջոցով:

Քաղաքապետարանի ծրագրերի եւ արտաքին կապերի բաժնի պետ Ալեկոյե Համբարձումյանը ներկայացրեց ծրագրի շրջանակներում անցած երկու տարում Կապանում կատարված աշխատանքները:

Ծրագրում ընդգրկված է 62 միջոցառում համայնքային կյանքի տարբեր ոլորտներում՝ քաղաքաշինություն եւ ճարտարապետություն, համայնքային ենթակառուցվածքի կառուցում, կոմունալ-բնակարանային տնտեսություն, ճանապարհաշինարարություն ու տրանսպորտ, հանգստի գոտիների բարելավում: Տարբեր ծրագրերի իրագործման ֆինանսավորման աղբյուրներն են պետբյուջեն, համայնքային բյուջեն, միջազգային եւ տեղական դոնոր կազմակերպությունները:

2013թ. իրականացվել է նախատեսված աշխատանքների 66.5 տոկոսը, 2012-ին այդ ցուցանիշը 57 տոկոս էր: Իսկ 2013-14թթ. նախատեսված 2 մլրդ 409 մլն 100 հազար դրամի փոխարեն իրականացվել է 3 մլրդ 791 մլն 900 հազար դրամի ներդրում:

Համայնքում կատարված աշխատանքների քննարկման ներկայները հնարավորություն ունեցան ծանոթանալ քաղաքապետարանի պատ-

րաստած տեսանյութի միջոցով: 2015-ի բյուջեի նախագիծը ներկայացրեց քաղաքապետարանի ֆինանսաբյուջետային բաժնի պետ Իվետա Թադեւոսյանը: Ըստ դրա՝ Կապանի քաղաքային բյուջեում գալիք տարի նախատեսվում են 1 մլրդ126 մլն 700 հազար դրամի եկամուտներ եւ նույն գումարի չափով ծախսեր: Ընդ որում, այդքանի 12,4 տոկոսը պիտի գոյանա հարկերից եւ տուրքերից, 74 տոկոսը պաշտոնական դրամաշնորհներն են, իսկ 13,6 տոկոսը բաժին է ընկնում այլ եկամուտների: Իվ. Թադեւոսյանը ըստ ոլորտների ներկայացրեց բյուջեի նախատեսած ծախսերի ուղղությունները: Համայնքի պահուստային ֆոնդը կկազմի 66մլն 159 հազար դրամ:

Ծախսերի ընդհանուր ծավալի 14,9 տոկոսը բաժին է ընկնում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, 80 տոկոսը կազմում է աշխատավարձի ֆոնդը. աշխատավարձերի բարձրացում չի նախատեսվում, միայն գալիք տարվանից նվազագույն աշխատավարձի բարձրացումն ապահովելու համար պետությունը դուտագիա է տրամադրում:

Վերջում հնչեցին հարցեր, առաջարկներ ու կարծիքներ, եւ քաղաքապետի տեղակալ Ռուդոլֆ Սարգսյանը տեղեկացրեց, որ դրանք կքննարկվեն քաղաքապետարանի աշխատակազմում եւ կներկայացվեն ավագանուն:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

# Խոսք՝ նվիրված բնօրրանին

## Ես սիրում եմ Կապանը, որովհետեւ...

Կապանն իմ ծննդավայրն է, իմ բնօրրանը, ինձ ուժ ու կորով տվողը, ինձ եռանդ պարգևողը: Ես շատ եմ սիրում իմ հայրենի Կապան քաղաքը, նրա շրջապատը, նրա մարտնչությունը ու գեղեցիկ կառուցվածքը, նրա մաքուր օդն ու զուլալ ջրերը: Կապանը Հայաստանի գեղեցիկ վայրերից է:



Կապանն իմ ծննդավայրն է, իմ բնօրրանը, ինձ ուժ ու կորով տվողը, ինձ եռանդ պարգևողը: Ես շատ եմ սիրում իմ հայրենի Կապան քաղաքը, նրա շրջապատը, նրա մարտնչությունը ու գեղեցիկ կառուցվածքը, նրա մաքուր օդն ու զուլալ ջրերը: Կապանը Հայաստանի գեղեցիկ վայրերից է:

Որակյալ է նաեւ Կապանի ուսուցչական կազմը, որն ապահովում է ապագա մասնագետների հզոր հիմքն ու զարգացումը: Կապանը նաեւ առաջատար է արվեստի ոլորտում: Ունի լավ դերասաններ, երգիչ-երգչուհիներ, նկարիչներ, պարուհիներ, երաժիշտներ: Նույնիսկ Կապանի միջոց է համեղ, ջուրն է անուշ, օդն է մաքուր, եւ բնությունն է յուրօրինակ:

Մեր Խուստուուկ սարի պես ողջ աշխարհում չկա սար, որն իր պահպան տեսքով հսկում է բոլորիս: Նա մեր հույսն ու հավատն է, մեր երջանակը: Ես վստահ եմ՝ մնացած կապանցիները նույնպես հպարտանում են Խուստուուկ սարով, մեր բնօրրանի զարդ ու զարդարանքով:

Ինձ թվում է, թե ես մի այլ վայրում երբեք չեմ կարող ապրել ու շնչել, երբեք չեմ լքի իմ գեղեցիկ քաղաքն ու միշտ կմնամ հավատարիմ:

**ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱՂՎԱՍՏՅԱՆ**  
Կապանի արվեստի պետական քոլեջի 2-րդ կուրսի ուսանողուհի